ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԷՆ-ԳՀԾՁԲ-20/6-97-20

ք. Երևան «15» 04 2020 թ.

**ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը**, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար **Ա. Խառատյանի** որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<**Գարանտսերվիս**>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն **Մ.Նիկողոսյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է համալիրգչային ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **10** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **700000**(յոթ հարյուր հազար ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

**ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.**

---

**ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.**
**ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.**
**Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.**

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[22] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի

միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
| --- | --- |
| **ՀՀ էկոնոմիկայի նախարարություն** | **«Գարանտսերվիս» ՍՊԸ** |
| Հասցե՝ ք.Երևան, Մ. Մկրտչյան 5 | Հասցե՝ Երևան, Թբիլիսյան խճ 20 |
| Հ/Հ՝ 900011018695, 900011022739 | «Կոնվերսբանկ» ՓԲԸ |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | Հ/Հ՝ 193004674290 |
| ՀՎՀՀ՝ 02698604 | ՀՎՀՀ՝ 00840437 |
| --------------------- **Ա. Խառատյան** | --------------------- **Մ. Նիկողոսյան** |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված N 1
« » 20 թ. կնքված
«ՀՀԷՆ-ԳՀԾՁԲ-20/6- » ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | Ժամկետը |
| | | Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ այդ թվում | | | | | |
| 1 | 50111130/1 /Էկոնոմիկայի նախարարություն/ | (տե՛ս ստորև բերված աղյուսակը) | դրամ | 400000 | 1 | Ք.Երևան | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև 2020թ. դեկտեմբերի 25 |

| Հ/Ի | SU-1,SU-2 Ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները | Տրանսպորտային միջոցների մակնիշները (տեսակները) ըստ չափաբաժինների<br>1-ին չափաբաժին Տոյոտա Քեմրի մակնիշի ա/մ /1 հատ/<br>Գնացուցակ/առավ.միավ.գին |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| | **1.SU-1 ներառվող ծառայությունների անվանումը** | |
| 1 | Բռնկման համակարգի ստուգում | 10000 |
| 2 | Սառեցման համակարգի ստուգում | 10000 |
| 3 | Յուղման համակարգի ստուգում | 10000 |
| 4 | Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում | 10000 |
| 5 | Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում | 10000 |
| 6 | Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում | 10000 |
| | **2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ** | |
| 7 | Յուղի և յուղի զտիչի փոխարինում | 1000 |
| 8 | Յուղի պոմպի փոխարինում | 10000 |
| 9 | Օդի զտիչի փոխարինում | 1000 |
| 10 | Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում | 3000 |
| 11 | Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում | 6000 |
| 12 | Բենզամղիչի փոխարինում | 10000 |
| 13 | Վառելիքի զտիչի փոխարինում | 10000 |
| 14 | Օդորակիչի և սրահի ֆիլտրերի փոխարինում | 3000 |
| | **3. Սառեցման և արտածման համակարգ** | |
| 15 | Ռադիատորի վերանորոգում | 30000 |
| 16 | Թերմոստատի փոխարինում | 8000 |
| 17 | Ջրի պոմպի փոխարինում | 25000 |
| 18 | Ջրի պոմպի վերանորոգում | 10000 |
| 19 | Խլացուցիչի հանում և տեղադրում | 10000 |

| | | |
|---|---|---|
| | **4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ** | |
| 20 | Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում | 35000 |
| 21 | ՓՏ-ի հանում և տեղադրում | 35000 |
| 22 | ՓՏ-ի վերանորոգում | 35000 |
| 23 | ՓՏ-ի առանցքակալի փոխարինում | 8000 |
| 24 | ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում | 8000 |
| | **5. Կախոց** | |
| 25 | Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում | 8000 |
| 26 | Անվակունդի առանցքակալի փոխարինում | 12000 |
| 27 | Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում | 12000 |
| 28 | Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում | 8000 |
| 29 | Ներքևի լծակի հանում և տեղադրում | 11000 |
| 30 | Ներքևի լծակի վռանների փոխարինում | 8000 |
| 31 | Գնդե հողակապերի փոխարինում | 6000 |
| 32 | Առջևի կայունարարի հանում և տեղադրում | 6000 |
| 33 | Առջևի կայունարարի վռանների փոխարինում | 6000 |
| 34 | Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում | 6000 |
| 35 | Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում | 8000 |
| | **6. Ղեկային մեխանիզմ** | |
| 36 | ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում | 15000 |
| 37 | ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում | 15000 |
| | **7. Արգելակային համակարգ** | |
| 38 | Արգելակային փողրակի փոխարինում | 5000 |
| 39 | Առջևի արգելակային կոճղակների փոխարինում | 5000 |
| 40 | Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում | 5000 |
| 41 | Հետևի կոճղակների փոխարինում | 5000 |
| 42 | Առջևի արգելակային սկավառակի փոխարինում | 8000 |
| 43 | Հետևի արգելակային սկավառակի փոխարինում | 8000 |
| | **8. Էլեկտրասարքավորում** | |
| 44 | Էլեկտրասարքավորման վերանորոգում | 20000 |
| 45 | Գեներատորի հանում և տեղադրում | 8000 |
| 46 | Գեներատորի վերանորոգում | 8000 |
| 47 | Մեկնարկիչի հանում և տեղադրում | 8000 |
| 48 | Մեկնարկիչի վերանորոգում | 8000 |
| 49 | Առջևի լապտերի հանում և տեղադրում | 5000 |
| 50 | Հետևի լապտերի հանում և տեղադրում | 5000 |
| 51 | Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում | 20000 |
| 52 | Էլեկտրական ապիչների փոխարինում | 4000 |
| 53 | Էլեկտրական անջատիչների փոխարինում | 3000 |
| 54 | Վառոցքի մոմերի փոխարինում | 3000 |
| 55 | Կոնդիցիոների լիցքավորում | 25000 |
| 56 | Կոնդիցիոների վերանորոգում | 20000 |
| | **9. Այլ ծառայություններ** | |
| 57 | Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում գին 1 քառ.դմ - ի համար | 8000 |
| 58 | Անիվի հանում և տեղադրում | 1000 |

| | | |
|---|---|---|
| 59 | Անվադողի վերանորոգում | 1000 |
| 60 | Անիվի բալանսավորում | 1000 |
| | **ՏՄ-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները** | |
| | **1.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ** | |
| 61 | Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր | 5000 |
| 62 | Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր | 7000 |
| 63 | Յուղի զտիչ | 10000 |
| 64 | Յուղի պոմպ | 20000 |
| 65 | Յուղի պոմպի շարժաբեր | 7000 |
| 66 | Վառոցքի մոմ | 10000 |
| 67 | Ինժեկտորի ֆորսունկա | 50000 |
| 68 | Վառելանյութի մղիչ էլեկտրական | 80000 |
| 69 | Վառելանյութի զտիչ | 55000 |
| 70 | Օդի զտիչ | 12000 |
| 71 | Ջերմաստիճանային տվիչ | 28000 |
| 72 | Յուղի տվիչ | 26000 |
| 73 | Ջրի տվիչ | 28000 |
| 74 | Օդորակիչի զտիչ | 12000 |
| 75 | Սրահի զտիչ | 12000 |
| | **2. Սառեցման և արտածման համակարգ** | |
| 76 | Հովհարի փոկ | 35000 |
| 77 | Հովհար | 52000 |
| 78 | Ռադիատոր | 165000 |
| 79 | Ջերմոստատ | 18000 |
| 80 | Ջրի պոմպ | 68000 |
| 81 | Ջրի պոմպի առանցքակալ | 0 |
| 82 | Սառեցման հեղուկ 1 լիտր | 4000 |
| 83 | Փոկ | 12000 |
| | **3. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ** | |
| 84 | Տրանսմիսսիոն յուղ, 1 լիտր | |
| | **4. Կախոց** | |
| 85 | Առջևի հարվածամեղմիչ | 90000 |
| 86 | Գնդե հոդակապ | 36000 |
| 87 | Առջևի կայունարար | 85000 |
| 88 | Առջևի կայունարարի վռան | 6000 |
| 89 | Առջևի կայունարարի առջևի վռան | 1000 |
| | **5. Ղեկային մեխանիզմ** | |
| 90 | Ղեկային կայուն | 385000 |
| 91 | Ղեկային կայունի առանցքակալ | 12000 |
| 92 | Ղեկային կայունի խաչուկ | 90000 |
| 93 | Հիդրոուժեղարար | 265000 |
| 94 | Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր | 7000 |
| | **6. Արգելակային համակարգ** | |
| 95 | Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ | 65000 |
| 96 | Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ | 45000 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 97 | Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ | 0 | | | | | |
| | | 98 | Առջևի արգելակային սկավառակ | 88000 | | | | | |
| | | 99 | Հետևի արգելակային սկավառակ | 85000 | | | | | |
| | | | **7. Էլեկտրասարքավորում** | | | | | | |
| | | 100 | Գեներատոր | 285000 | | | | | |
| | | 101 | Գեներատորի դիոդային կամրջակ | 38000 | | | | | |
| | | 102 | Գեներատորի ռելե | 45000 | | | | | |
| | | 103 | Գեներատորի առանցքակալ | 12000 | | | | | |
| | | 104 | Ստարտեր | 185000 | | | | | |
| | | 105 | Ստարտերի ռելե | 20000 | | | | | |
| | | 106 | Ստարտերի ածուխ | 28000 | | | | | |
| | | 107 | Բենդեքս | 36000 | | | | | |
| | | 108 | Առջևի լապտեր | 175000 | | | | | |
| | | 109 | Առջևի թարթիչ | 0 | | | | | |
| | | 110 | Հետևի լապտեր | 85000 | | | | | |
| | | 111 | Հետևի թարթիչ | 0 | | | | | |
| | | 112 | Լամպ | 12000 | | | | | |
| | | | Ընդամենը | **3 510 000** | | | | | |
| 5 | 50111130/5 /Էկոնոմիկայի նախարարություն/ | | (տե՛ս ստորև) | | դրամ | 300000 | 1 | Ք.Երևան | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև 2020թ. Դեկտեմբերի 25 |

| Հ/հ | SU-1,SU-2 Ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները | Տրանսպորտային միջոցների մակնիշները (տեսակները) ըստ չափաբաժինների<br>5-րդ չափաբաժին Վազ-21214 մակնիշի ա/մ /11 հատ/<br>Գնացուցակ |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| | **1.SU-1 ներառվող ծառայությունների անվանումը** | |
| 1 | Բոնկման համակարգի ստուգում | 10000 |
| 2 | Սառեցման համակարգի ստուգում | 10000 |
| 3 | Յուղման համակարգի ստուգում | 10000 |
| 4 | Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում | 10000 |
| 5 | Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում | 10000 |
| 6 | Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում | 10000 |
| | **2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ** | |
| 7 | Յուղի և յուղի զտիչի փոխարինում | 1000 |
| 8 | Յուղի պոմպի փոխարինում | 10000 |
| 9 | Օդի զտիչի փոխարինում | 1000 |
| 10 | Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում | 3000 |
| 11 | Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում | 6000 |
| 12 | Բենզամղիչի փոխարինում | 10000 |
| 13 | Վառելիքի զտիչի փոխարինում | 10000 |
| 14 | Օդորակիչի և սրահի ֆիլտրերի փոխարինում | 3000 |
| | **3. Սառեցման և արտածման համակարգ** | |
| 15 | Ռադիատորի վերանորոգում | 10000 |
| 16 | Թերմոստատի փոխարինում | 5000 |
| 17 | Ջրի պոմպի փոխարինում | 10000 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 18 | Ջրի պոմպի վերանորոգում | 10000 | | | | | |
| | | 19 | Խլարարի հանում և տեղադրում | 10000 | | | | | |
| | | | **4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ** | | | | | | |
| | | 20 | Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում | 15000 | | | | | |
| | | 21 | ՓՏ-ի հանում և տեղադրում | 15000 | | | | | |
| | | 22 | ՓՏ-ի վերանորոգում | 15000 | | | | | |
| | | 23 | ՓՏ-ի առանցքակալի փոխարինում | 8000 | | | | | |
| | | 24 | ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում | 8000 | | | | | |
| | | | **5. Կախոց** | | | | | | |
| | | 25 | Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում | 8000 | | | | | |
| | | 26 | Անվակունդի առանցքակալի փոխարինում | 10000 | | | | | |
| | | 27 | Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում | 10000 | | | | | |
| | | 28 | Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում | 4000 | | | | | |
| | | 29 | Ներքևի լծակի հանում և տեղադրում | 4000 | | | | | |
| | | 30 | Ներքևի լծակի վզանների փոխարինում | 1000 | | | | | |
| | | 31 | Գնդե հոդակապերի փոխարինում | 4000 | | | | | |
| | | 32 | Առջևի կայունարարի հանում և տեղադրում | 4000 | | | | | |
| | | 33 | Առջևի կայունարարի վռանների փոխարինում | 4000 | | | | | |
| | | 34 | Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում | 4000 | | | | | |
| | | 35 | Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում | 4000 | | | | | |
| | | | **6. Ղեկային մեխանիզմ** | | | | | | |
| | | 36 | ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում | 8000 | | | | | |
| | | 37 | ՂԿ-ի հոդակապերի հանում և տեղադրում | 8000 | | | | | |
| | | | **7. Արգելակային համակարգ** | | | | | | |
| | | 38 | Արգելակային փողրակի փոխարինում | 3000 | | | | | |
| | | 39 | Առջևի արգելակային կոճղակների փոխարինում | 3000 | | | | | |
| | | 40 | Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում | 3000 | | | | | |
| | | 41 | Հետևի կոճղակների փոխարինում | 3000 | | | | | |
| | | 42 | Առջևի արգելակային սկավառակի փոխարինում | 8000 | | | | | |
| | | 43 | Հետևի արգելակային սկավառակի փոխարինում | 8000 | | | | | |
| | | | **8. Էլեկտրասարքավորում** | | | | | | |
| | | 44 | Էլեկտրասարքավորման վերանորոգում | 20000 | | | | | |
| | | 45 | Գեներատորի հանում և տեղադրում | 6000 | | | | | |
| | | 46 | Գեներատորի վերանորոգում | 6000 | | | | | |
| | | 47 | Մեկնարկիչի հանում և տեղադրում | 4000 | | | | | |
| | | 48 | Մեկնարկիչի վերանորոգում | 4000 | | | | | |
| | | 49 | Առջևի լապտերի հանում և տեղադրում | 4000 | | | | | |
| | | 50 | Հետևի լապտերի հանում և տեղադրում | 4000 | | | | | |
| | | 51 | Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում | 20000 | | | | | |
| | | 52 | Էլեկտրական տվիչների փոխարինում | 3000 | | | | | |
| | | 53 | Էլեկտրական անջատիչների փոխարինում | 3000 | | | | | |
| | | 54 | Վառոցքի մոմերի փոխարինում | 3000 | | | | | |
| | | 55 | Կոնդիցիոների լիցքավորում | 25000 | | | | | |
| | | 56 | Կոնդիցիոների վերանորոգում | 20000 | | | | | |
| | | | **9. Այլ ծառայություններ** | | | | | | |
| | | 57 | Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում գին 1 քառ.մ – ի | 8000 | | | | | |

| | | |
|---|---|---|
| | համար | |
| 58 | Անիվի հանում և տեղադրում | 1000 |
| 59 | Անվադողի վերանորոգում | 1000 |
| 60 | Անիվի բալանսավորում | 1000 |
| | **SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները** | |
| | **1.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ** | |
| 61 | Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր | 5000 |
| 62 | Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր | 7000 |
| 63 | Յուղի զտիչ | 4000 |
| 64 | Յուղի պոմպ | 15000 |
| 65 | Յուղի պոմպի շարժաբեր | 7000 |
| 66 | Վառոցքի մոմ | 2000 |
| 67 | Ինժեկտորի ֆորսունկա | 20000 |
| 68 | Վառելանյութի մղիչ էլեկտրական | 28000 |
| 69 | Վառելանյութի զտիչ | 4000 |
| 70 | Օդի զտիչ | 3000 |
| 71 | Ջերմաստիճանային տվիչ | 8000 |
| 72 | Յուղի տվիչ | 8000 |
| 73 | Ջրի տվիչ | 8000 |
| 74 | Օդորակիչի զտիչ | 6000 |
| 75 | Սրահի զտիչ | 6000 |
| | **2. Սառեցման և արտածման համակարգ** | |
| 76 | Հովհարի փոկ | 3000 |
| 77 | Հովհար | 22000 |
| 78 | Ռադիատոր | 28000 |
| 79 | Թերմոստատ | 8000 |
| 80 | Ջրի պոմպ | 9000 |
| 81 | Ջրի պոմպի առանցքակալ | 0 |
| 82 | Սառեցման հեղուկ 1 լիտր | 2000 |
| 83 | Փոկ | 3000 |
| | **3. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ** | |
| 84 | Տրանսմիսսիոն յուղ, 1 լիտր | |
| | **4. Կախոց** | |
| 85 | Առջևի հարվածամեղմիչ | 16000 |
| 86 | Պնդե հոդակապ | 6000 |
| 87 | Առջևի կայունարար | 12000 |
| 88 | Առջևի կայունարարի վռան | 1000 |
| 89 | Առջևի կայունարարի առջևի վռան | 1000 |
| | **5. Ղեկային մեխանիզմ** | |
| 90 | Ղեկային կալուն | 48000 |
| 91 | Ղեկային կալունի առանցքակալ | 2000 |
| 92 | Ղեկային կալունի խաչուկ | 5500 |
| 93 | Հիդրոուժեղարար | 40000 |
| 94 | Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր | 7000 |
| | **6. Արգելակային համակարգ** | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 95 | Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ | 6000 | | | | | |
| | | 96 | Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ | 0 | | | | | |
| | | 97 | Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ | 10000 | | | | | |
| | | 98 | Առջևի արգելակային սկավառակ | 14500 | | | | | |
| | | 99 | Հետևի արգելակային սկավառակ | 16000 | | | | | |
| | | | 7. Էլեկտրասարքավորում | | | | | | |
| | | 100 | Գեներատոր | 49000 | | | | | |
| | | 101 | Գեներատորի դիոդային կամրջակ | 9000 | | | | | |
| | | 102 | Գեներատորի ռելե | 7000 | | | | | |
| | | 103 | Գեներատորի առանցքակալ | 4000 | | | | | |
| | | 104 | Ստարտեր | 48000 | | | | | |
| | | 105 | Ստարտերի ռելե | 4500 | | | | | |
| | | 106 | Ստարտերի ածուխ | 6000 | | | | | |
| | | 107 | Բենդեքս | 8000 | | | | | |
| | | 108 | Առջևի լապտեր | 19000 | | | | | |
| | | 109 | Առջևի թարթիչ | 12000 | | | | | |
| | | 110 | Հետևի լապտեր | 14000 | | | | | |
| | | 111 | Հետևի թարթիչ | 0 | | | | | |
| | | 112 | Լամպ | 4500 | | | | | |
| | | | Ընդամենը | **1020000** | | | | | |

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

*** ծառայության մատուցումը իրականացվելու է՝ պատվիրատուի կողմից պահանջի ներկայացման օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում:*

Ավտոմեքենաների, Սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների գնման դեպքում, մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է՝ հաշվի առնելով սույն հրավերով սահմանված ծառայության յուրաքանչյուր տեսակի մատուցման միավոր առավելագույն գների հանրագումարը, նկատի ունենալով, որ կնքվող պայմանագրի շրջանակում մատուցվող ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.- 1-ին չափ-1 666 999, 5-րդ չափ-504 000

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
| --- | --- |
| **ՀՀ էկոնոմիկայի նախարարություն** | **«Գարանտսերվիս» ՍՊԸ** |
| Հասցե՝ ք.Երևան, Մ. Մկրտչյան 5 | Հասցե՝ Երևան, Թբիլիսյան խճ 20 |
| Հ/Հ՝ 900011018695, | «Կոնվերսբանկ » ՓԲԸ |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | Հ/Հ 193004674290 |
| ՀՎՀՀ՝ 02698604 | ՀՎՀՀ՝ 00840437 |
| ________ **Ա. Խառատյան** | ________ **Մ. Նիկողոսյան** |

Հավելված N 2
« » 20 թ. կնքված
«ՀՀԷՆ-ԳՀԾՁԲ-20/6- » ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 50111130/1 | **Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ /Տոյոտա Քեմրի մակնիշի /** | - | - | - | 400000 | 400000 | 400000 | 400000 | 400000 | 400000 | 400000 | 400000 | 400000 | 400000 |
| Ըստ ավտոմեքենաների վերանորոգման անհրաժեշտության դեպքում կազմված գումար, բայց ոչ ավելի, քան **400 000** ՀՀ դրամ | | | | | | | | | | | | | | | |
| 5 | 50111130/5 | **Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ /4X4 տիպի /Վազ 21214 Նիվա/** | - | - | - | 200 000 | 200 000 | 200 000 | 300 000 | 300 000 | 300 000 | 300000 | 300000 | 300000 | 300000 |
| Ըստ ավտոմեքենաների վերանորոգման անհրաժեշտության դեպքում կազմված գումար, բայց ոչ ավելի, քան **300 000** ՀՀ դրամ | | | | | | | | | | | | | | | |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | - | - | - | 600 000 | 600 000 | 600 000 | 700 000 | 700 000 | 700 000 | 700 000 | 700 000 | 700 000 | 700 000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ՀՀ էկոնոմիկայի նախարարություն**
Հասցե՝ ք.Երևան, Մ. Մկրտչյան 5
Հ/Հ 900011018695,
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02698604

------------------ **Ա. Խառատյան**

**ԿԱՏԱՐՈՂ**

**«Գարանտսերվիս» ՍՊԸ**
Հասցե՝ Երևան, Թբիլիսյան խճ 20
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 193004674290
ՀՎՀՀ 00840437

------------------ **Մ.Նիկողոսյան**

*Հավելված 3*
*« » 20 թ. կնքված*
*«ՀՀԷՆ-ԳՀԾՁԲ-20/6- ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ___ | ___ |
| ___ | ___ |
| գտնվելու վայրը ___ | գտնվելու վայրը ___ |
| հհ ___ | հհ___ |
| հվհհ ___ | հվհհ___ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*« » « » 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
___
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ___ | ___ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ___ | ___ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
«ՀՀԷՆ-ԳՀԾՁԲ-20/6- ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ___________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ____________________ -ին կնքված N _______________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

________________________
ազգանուն, անուն

________________________
ստորագրություն

________________________
ազգանուն, անուն

________________________
ստորագրություն